

Տ. ՆՈՐՎԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԶԱՔԱՐՅԱՆ

Տ. Նորվան եպիսկոպոս Զաքարյանը (ավազանի անունով՝ Արմեն) ծնվել է 1940 թվականին Բեյրութում (Լիբանան):

Նախնական կրթությունը ստացել է տեղի Նոր Ադանա թաղի հայ ազգային Աբգարյան վարժարանում:

1953—1954 ուսումնական տարում սովորել է Անթիլիասի Դպրեվանքում, իսկ 1958 թվականին՝ Հ. Բ. Ը. Միության Բեյրութի Հովակիմյան-Մանուկյան երկրորդական վարժարանում:

1959 թվականին ընդունվել է Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարանի ընծայարանի բաժինը:

1967 թվականի դեկտեմբերի 24-ին Փարիզի Ս. Հովհաննես Մկրտիչ Մայր եկեղեցում ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ Տ. Սերովբե արքեպ. Մանուկյանի:

1968 թվականի հոկտեմբերի 28-ին, Գյուտ Խաչի տոնին, Փարիզի Ս. Հովհաննես Մկրտիչ Մայր եկեղեցում ձեռնադրվել է կուսակրոն քահանա՝ ձեռամբ Տ. Սերովբե արքեպ. Մանուկյանի, և վերանվանվել Տ. Նորվան:

1968—1973 թթ. բարձրագույն կրթություն է ստացել Փարիզի կաթոլիկ ինստիտուտի աստվածաբանական ֆակուլտետում, որտեղ ուսումնառության տարիներին ներկայացրել է բազմաթիվ քննական աշխատանքներ՝ նվիրված հայ մատենագիրների կյանքին և գրական վաստակին, ինչպես օրինակ՝ Ստ. Սյունեցուն, Եղիշե պատմիչին, Զաքարիա Զագեցուն և այլն:

1970 թվականի փետրվարին մասնավոր վարդապետական իշխանություն է ստացել Փարիզի հայոց Ս. Հովհաննես Մկրտիչ Մայր եկեղեցում՝ ձեռամբ Տ. Սերովբե արքեպ. Մանուկյանի:

1973 թվականին Տ. Սերովբե արքեպ. Մանուկյանի կարգադրությամբ նշանակվել է Իսի Լե Մուլինոյի հայ եկեղեցու շինության հանձնախմբի նախագահ:

1975 թվականից, սույն եկեղեցու կառուցման ավարտումից հետո, մինչև 1980 թվականը վարել է Իսի Լե Մուլինոյի և շրջակայքի հոգևոր հովվի պաշտոնը:

1980 թվականի մարտի 16-ին նշանակվել է Լիոնի և Ռոն Ալփ շրջանի հայրապետական պատվիրակի փոխանորդ, պաշտոն, որը շարունակում է ձեռնհասորեն վարել մինչև օրս:

1982 թվականի փետրվարի 14-ին, կիրակի օրը, Տեառնընդառաջի տոնին, Ս. Էջմիածնի Մայր տաճարում ձեռնադրվել է եպիսկոպոս՝ ձեռամբ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի: